

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

Շողեր Մինասյան, , ր.գ.թ., դոցենտ,  
ԱրՊՏ ակ. Ս. Արրահամյանի անվ. հայոց լեզվի ամբիոն  
Էլ.հասցե՝ [shogher.minasyan@mail.ru](mailto:shogher.minasyan@mail.ru)

**ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ  
<<ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆՂԵՍԻ>> ԷԶԵՐՈՒՄ**

Հոդվածում ներկայացված են << Պատմաբանասիրական հանդեսի >> էջերում լույս տեսած և Ղարաբաղի բարբառին նվիրված հոդվածները, որոնց հեղինակները լեզվական փաստերի քննությամբ ապացուցում են Արցախի հայախոս բնակչության գոյությունը, նաև բարբառի ու գրաբարի միջև գոյություն ունեցող հնչյունական, բառային ու քերականական բազմաթիվ իրողությունների առկայությունը:

*Բանալի բառեր՝ բարբառային իրողություններ, հնդեվրոպական հիմք լեզու, քերականական համակարգի առնչություններ, ստուգաբանություն, հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն, ենթաբարբառ, հնչյունափոխություն, բարբառային տարբերակ, դարձվածային արտահայտություններ:*

*Шогер Минасян – к.ф.н., доцент,*

*кафедра армянского языка им. академика С. Абрамяна*

**ИССЛЕДОВАНИЯ КАРАБАХСКОГО ДИАЛЕКТА В ИЗДАНИИ ПАТМАБАНАСИРАКАН АНДЕС  
(ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ)**

В статье рассматриваются публикации в журнале *Патмагитакан андес* посвященные Карабахскому диалекту. Авторы публикаций подтверждают наличие армяноязычного населения в Арцахе на основе лингвистических фактов, также наличие множества фонетических, лексикологических и грамматических универсалий в диалекте и староармянском языке.

*Ключевые слова:* диалектное явление, индоевропейский праязык, грамматические универсалии, диалектология, этимология, фонетика, лексикология, морфология, синтаксис, поддиалект, чередование звуков, диалектный аналог, фразеологизмы.

**Shogher Minasyan - Ph.D., Associate Professor,**

**Chair of Armenian Language after Academician S. Abrahamyan**

**THE STUDY OF THE KARABAGH DIALECT IN PATMABANASIRAKAN HANDES  
(HISTORICAL-PHILOLOGICAL MAGAZINE)**

The article analyses papers on Karabagh dialect published in *Patmabanasirakan handes* magazine (Philological magazine). These articles reveal linguistic phenomena which prove that Artsakh population was Armenian-speaking, they also point to numerous phonetic, lexical and grammatical universals in the dialect and Classical Armenian.

*Keywords:* dialectal phenomena, Indo-European, protolanguage, grammatical universals, dialectology, etymology, phonetics, lexicology, morphology, syntax, subdialect, sound interchange, dialectal analogue, phraseologism

Պատմաբանասիրական հանդեսի էջերում լույս են տեսել Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությանը նվիրված մի շարք հոդվածներ, որոնց հեղինակները լեզվական իրողությունների ուսումնասիրությամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն հաստատում են Արցախի հայախոս բնակչության գոյությունը, նաև բարբառի ու գրաբարի միջև գոյություն ունեցող հնչյունական, բառային ու քերականական բազմաթիվ իրողությունների առկայությունը:

Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի և Ղարաբաղի բարբառի առնչության հարցի շուրջ» հոդվածի հիմնական նպատակը բարբառի լեզվական որոշ իրողությունների բացահայտումն է, որը կարող է լրացուցիչ փաստարկ ծառայել ապացուցելու, որ Արցախ-Սյունիքում հայերենը սկսել է գործածվել հայ տարրերի կազմավորման ընթացքին զուգահեռ: Հոդվածագիրը լեզվական տարբեր

իրողությունների քննությամբ օգնում է հերքելու այն կարծիքը, թե իբր մինչև 9-12-րդ դարերը Արցախը հայկական բնակչություն չունի: Քննվում են հնչյունական, բառային ու քերականական իրողություններ, որոնցով զուգահեռներ են հաստատվում Ղարաբաղի բարբառի և գրաբարի, բարբառի և հնդեվրոպական հիմք լեզվի միջև:

Հնչյունական երևույթներից ներկայացված է գրաբարյան այ-ի դիմաց Ղարաբաղի բարբառում է-ի կամ ա (կամ օ) -ի առկայությունը: Ընդ որում, այ>է համապատասխանությունը կա այն բառերում, որոնցում տեղի է ունեցել բաղաձայնների տեղաշարժ, այսինքն՝ ձայնեղների խլացում (օրինակ՝ բան-պէն, բարձր-պէցիր, դանակ-տէնակ): Իսկ գրաբարյան ձևերին ավելի հարազատ բառերում բարբառն ունի այ>ա (կամ օ) համապատասխանությունը (օրինակ՝ հայր-հօր, փայտ-փօղ): Պարզ է դառնում, որ ա>է-ն բարբառում կատարվել է գրաբարյան ձայնեղների խլացումից հետո կամ նրան զուգահեռ: Երկու դեպքում էլ այն հետագա շրջանի երևույթ է, որովհետև ձայնեղների խլացումն ավարտվել է 9-12-րդ դարերում: Ուրեմն՝ գրաբարյան այ-ի դիմաց բարբառում ա (օ) -ի առկայությունը պետք է դիտել կամ որպես այ-ին զուգահեռ ձևեր, կամ եթե բարբառի ա (օ) -ն գրաբարյան այ-ի պարզեցման արդյունք է, ապա այ>ա-ն նախորդել է այ>է-ին: Այս դեպքում նույնպես գրաբարյան այ-ի փոխարեն բարբառում աՄԷ ձևերից հինը ա-ն չէ: Քանի որ հնչյունական օրինաչափ փոփոխությունները կարճ ժամանակամիջոցում չեն կատարվում, ապա դարձյալ ա-ով ձևերը կդիտվեն որպես բարբառային հին տարբերակ:

Բառային իրողությունների քննությունը կատարելիս հեղինակը բերում է գրաբարյան այնպիսի բառեր, որոնք արդի հայերենում չեն գործածվում կամ հաճախական չեն, ինչպես՝ ակն, բառնալ, բոլոր, գիջ, թաթուլ, թուրբ, կապար, կույս, հանգիստ, սերեկ, տոտիպ և այլն: Գրաբարյան որոշ արմատներ բարբառում պահպանված են բարդությունների մեջ՝ ճեպ (ըշկճիպի), հանգ (հանգեր), յոյլ (նլլաննալ), հար (հարու տալ, պիրիհարէնք, պիցրհար):

Անդրադառնալով քերականական համակարգի առնչություններին՝ Լ. Հովհաննիսյանը ներկայացնում է գրաբարի և բարբառի հոլովման և խոնարհման համակարգերի, թվական խոսքի մասի մի շարք զուգահեռներ:

Հոլովման համակարգում հետաքրքիր է բազմիմաստ մասնիկների առկայությունը, որը խոսում է թեքականության մասին. ց (ախպօրց, քվօրց, հարանց), ուք (վէտուք, ծէտուք, աչուք) մասնիկներն արտահայտում են և՛ թվի, և՛ հոլովի իմաստներ: Բարբառն ունի գրաբարյան պարառականի հետքեր (գիրավ տալ, գիրավ անել), ի նախորդով կազմություններ, որոնցում ի-ն հիմնականում դարձել ը (պըրտիլեր, պըրտըվեր, կըխըլեր, վընըծօց), որոշ միավանկ բառեր էլ պահպանել են բառավերջի ն-ն (նօնը, տօնը, յեզնը, թօնը):

Թվական խոսքի մասի համակարգում ունեցած աղերսները հաստատվում են բարբառում անձներական թվականների առկայությամբ, որոնք գրաբարի անձներական թվականներին առնչվում են ոչ միայն կազմությամբ և արտահայտած իմաստով, այլև հոլովվելու ձևով (ըրկօքան-ըրկուքանուց):

Ըստ Գ. Ջահուկյանի՝ անձներական թվականների գործածությունը հատկապես բնորոշ էր դասական գրաբարին (5-րդ դարի 1-ին կես), ուրեմն հենց այդ ժամանակաշրջանից էլ հիշյալ ձևերն առկա էին Արցախի բնակչության լեզվում, որովհետև հետագա շրջանում (9-12-րդ դդ) անձներական թվականները հայերենում կենսունակ չէին և հետևաբար չէին կարող տարածվել: Քանի որ լեզուների զարգացման ոչ սկզբնական շրջանում թվականի փոխառությունը այլ լեզուներից համարյա բացառվում է, ապա այլալեզու ժողովուրդները չէին փոխառի միայն ու միայն գրաբարին բնորոշ թվականի այդ կարգը:

Բայական համակարգի վերաբերյալ ընդհանրություններից հետաքրքիր է գրաբարյան *ունիմ* բայի անցյալ կատարյալի *կալայ* ձևի պահպանումը բարբառում (ինք օնիմ – ինք կալի), նաև ի-ով ապառնիի առկայությունը բարբառում (ըսելի, կիրիլի, ուտելի), որոնցում, ըստ հեղինակի, ավելի հստակ է դերբայական-ժամանակային, քան հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունը: Մի շարք բայեր բարբառում (հըրցընել, խընդըրել) խնդիր են առնում միայն բացառական հոլովով, մի բան, որ խորթ չէ գրաբարին:

Բարբառը պահպանել է նաև գրաբարյան բազմաթիվ ոճեր իրենց իմաստներով՝ քընավ ընցընել (անցանել ընդ քուն), հղէ ընգնել (անկանել յուղի), աշկ ամել (աչք ամել), վընը կաց (յոտն կաց) և այլն:

Բերած լեզվական փաստերի քննությունից Լ. Հովհաննիսյանը եզրակացնում է, որ նախ՝ պետք է մերժելի համարել այն տեսակետը, ըստ որի՝ Արցախի բնակչությունը հայախոս է դարել 9-12-րդ դարերում և հետևաբար բարբառի ծագման ժամանակաշրջանն էլ այդ դարերի հետ կապելը:

Երկրորդ՝ Արցախը հայախոս է եղել վաղ ժամանակներից, որը վկայում է նաև բարբառում հնդեվրոպական բառերի առկայությունը, ինչպես՝ *այա, լօք տալ, պող, առոռ, մղղրմող, սըլկըհէլ* և այլն:

Իր «Բարբառային մի քանի բառերի քննություն» հոդվածում Լ. Հովհաննիսյանը ներկայացնում է Ղարաբաղի բարբառում գործածվող *ղօն, ըրաժան, ըրամակ, կասկ և տաճակ* բառերի ստուգաբանությունները: Միայն *մղղրին ղօնը ընգնէլ* (մտքերի մեջ խորասուզվել) դարձվածում գործածվող *ղօն* բառը տեղիք է տվել տարբեր մեկնաբանությունների: Չհամաձայնելով Ալ. Մարգարյանի կարծիքին, որը բառը կապում է տուն բառի հետ, հեղինակը այն բխեցնում է հնդեվրոպական *dhubnos* «խոր» արմատից, որից, ըստ Աճառյանի, առաջացել է հայերեն *անդունդ* բառը:

Ըրաժան/արաժան (հում կաթի սեր) բառը հոդվածագիրը համարում է պարսկերենից ծագած: Հենվելով հնչյունական համապատասխանությունների վրա՝ նա բառի համար ենթադրելի է համարում *rovən-rožan mōšān-արաժան-(ը)րաժան* անցումը: Ընդ որում, եթե *արաժան/ըրաժան* բառի իրանական ծագման փաստարկները ընդունելի լինեն, ապա, ըստ հեղինակի, այն վաղ շրջանի փոխառություն է, որը գրաբարում չի եղել, կամ գրաբարը չի պահպանել:

*Ըրամակ* (գործածական է *ըրամակ ընգնէլ* դարձվածում և նշանակում է մարդամեջ ընկնել) բառի ծագումը քննելիս Լ. Հովհաննիսյանը ընդունելի է համարում Հ. Աճառյանի կարծիքը, որը բառը իրանական *ram* (խումբ, բազմություն) արմատից առաջացած *երամ* բառի հետ է կապում:

Միայն Ղարաբաղի բարբառում պահպանված *կասկ* բառի կապակցությամբ հոդվածագիրը ենթադրելի է համարում նրա իրանական բնույթ ունենալը որպես հին փոխառություն՝ չնայած այն հանգամանքին, որ հայերենի մարմնի մասեր արտահայտող բառախմբի զգալի մասը բնիկ հայերեն է:

Լեզվաբանը բարբառային *կասկ* և գրաբարյան *քաշ* (իրանականից փոխառյալ) բառերի իմաստային համապատասխանությունը համարում է ակնհայտ: Ինչ վերաբերում է հնչյունական կազմին, ապա հեղինակը փորձում է հիմնավորել հայերենի՝ իրանական լեզուներից փոխառված այլ օրինակների, ինչպես նաև իրանական լեզուների ընձեռած տվյալների վրա: Կ-ք համապատասխանությունը հաստատելու համար կարելի է ներկայացնել նույնարմատ մի շարք բառեր՝ կ-ք տարբերակներով (kausa «կողմ» - հայ. կույս «կողմ», նաև քուստ «կողմ»): Մ-շ համապատասխանությունը հաստատող փաստեր ևս կան իրանական փոխառություններում՝ սեալ-շալ, վարս-վարշ: Այսպիսով՝ հեղինակը ընդունում է *կասկ*-ի հնդիրանական լեզուների հետ ունեցած աղերսները՝ հատկապես նկատի առնելով հին հնդ. kaksā «անութ, մեջքի կեսը»: *Կասկ/քաշ* զուգահեռներից հնագույնը առաջինն է, որը գրաբարը չի ավանդել:

Լ. Հովհաննիսյանը իմաստային աղերսներ է տեսնում *տաճակ, տաճկինակ* բառերի և հայերեն *թակ* (ծայրը գունդ գլխով փայտ) բառերի միջև: Ղարաբաղի բարբառում *թակ* բառն ունի «թուր թափելու փայտ», «ծեծ» իմաստները (վերջինից՝ թակել «ծեծել»):

*Թակ*-ը համարվում է բնիկ հնդեվրոպական (հ.-ե. *teg* կամ *tæg*-ից): Հոդվածագիրը հավանական է համարում *թակ* բառի հնդեվրոպական համապատասխան արմատից իրանական *տաճ*-ի առաջացումը, քանի որ իրանական լեզուներում k-č անցումը արտառոց երևույթ չէ: Ինչ վերաբերում է -ակ բաղադրիչին, ապա նրա իրանական ծագումը կասկած չի հարուցում: Որեմն, եզրափակում է հոդվածագիրը, իրանական tak-tač «խփել» արմատից էլ կազմվել է *տաճակ*-ը, որը և պահպանվել է Ղարաբաղի բարբառում:

Պատմաբանասիրական հանդեսի էջերում բարբառային բազմաթիվ բառերի ստուգաբանությամբ հանդես է եկել Ալ. Մարգարյանը: Ստուգաբանված բոլոր բառերը գործածական են Գորիսի բարբառում, մեծագույն մասը՝ նաև Ղարաբաղի բարբառում: Բառերի մի մասի ստուգաբանությունը հեղինակի կողմից ներկայացված է առաջին անգամ, մյուս մասի՝ տարբեր լեզվաբանների կողմից ներկայացված ստուգաբանությունների հետ համաձայն չլինելով՝ Ալ. Մարգարյանը փորձել է ներկայացնել և հիմնավորել իր տեսակետը:

*Շալք, սաք, խոզնըհաս, կուչ, ճկոռել, կաթ, չոկ, շկակել, պլպլալ, կզնվել, խնտալի/խնտաղա, գլուխկոնծի, թարսել, տանկ/տանգ, տոպ, թըռըմասկ, լիա, լոխ, ճապկի, շիաս, շիմ, պել, կոնծել, հուշտ, պլուտ, տունդի* բառերը կազմում են Ալ. Մարգարյանի կողմից առաջին անգամ ստուգաբանվածների խումբը: Սրանցից հեղինակը փոխառյալ է համարվում *պլուտ* (ռուսերեն *плут* «խորամանկ և հնարագետ խաբեբա») և *թարսել* (թրք. թարս «ներհակ, հակառակ») բառերը, *խոզնըհաս* (խարազանահաս) բառի առաջին բաղադրիչը: *Հուշտ*-ը և *կաթ*-ը (կաթիլ) կապում է նմանաձայնությունների հետ: *Բել* հատուկ անունից առաջացած է համարում *պել* բառը: Մյուս բոլոր բառերը, ըստ Ալ. Մարգարյանի, իրենց ծագմամբ կապված են գրաբարյան այս կամ այն բառի հետ,

ընդ որում՝ մի շարք դեպքերում թե՛ իմաստային, թե՛ հնչյունական ընդհանրություններ ըրավականին ակնհայտ են, և հետևաբար ստուգաբանությունը՝ համոզիչ:

Օրինակ՝ **ճապկի** (ճապուկ «ոյուրաթեք» բառից), **սաքը** (սարք բառից), **թերմացք** (թերի+մնացք), **կզնվել** (կիզանել բայի կրավորականից), **տունդի** (տուն «ծայր, պոչ» բառից), **շալք** (շաղ «ցող, խոնավություն, շիթ, կաթիլ» բառից և ք ածանցից), **պլպլալ** (փայլվիլ բառից) և այլն: Ավելի համարձակ կարելի է համարել **կուչ** (գուճ «ծունկ, ծնկի կոճ»), **ճկոել** (զճել «ծնկել»), **շկակել** (շիկանալ), **չոել** (աչառել), **լոխ** (ողջ) բառերի ստուգաբանությունները: Հնչյունափոխական յուրաքանչյուր երևույթ Ալ. Մարգարյանի կողմից հաստատվում է բարբառային համարժեք օրինակներով:

**Թօնը, կիզել, սմբել, խօխա, առոի, պէկ, աղէր, դօն, առիս** բառերի ստուգաբանությունները ներկայացնելիս Ալ. Մարգարյանը հիմնականում հակադրվում է Հ. Աճառյանի կարծիքին:

**Դօն** բառի ծագումը Ալ. Մարգարյանը կապում է **տուն** բառի հետ, որ նշանակում է նաև **խորհուրդ**: Հետագայում բառը այլ կերպ է ստուգաբանվել Լ. Հովհաննիսյանի կողմից: **Թօն(ն)/թօր(ը)** բառը Հ. Աճառյանը համարում է բաղադրված **ընդ** և **որ** բաղադրիչներից ,իսկ Ալ. Մարգարյանը՝ **ընդ** և **ուր**:

**Կիզել** (նշանակում է *վախենալ*) բառը Հ. Աճառյանը դասել է այն արմատական ձևերի շարքը, որոնք գրաբարում չեն եղել: Ըստ Ալ. Մարգարյանի՝ **կիզել**-ը գրաբարի **զոզել** (միզել) բայից է առաջացել, Ղարաբաղի բարբառում՝ **կուզիլ** փոխաբերաբար նշանակում է *վախենալ*:

Հ. Աճառյանի կողմից փոխառյալ համարվող **խօխա** (թուրքերենից) և **առոի** (հունարենից) բառերից առաջինը Ալ. Մարգարյանը կապում է **երեխա** բառի, երկրորդը՝ **առնուլ** բայի հրամայական եղանակի ձևի հետ:

Համաձայն չլինելով Աճառյանի հետ՝ **սմբել** բառի հարցում Ալ. Մարգարյանը համակարծիք է ՆՇԲ-ի հեղինակներին, որոնք բառի ծագումը ենթադրում են **ցամաքել**-ից՝ ց>ս, ա>ը հնչյունափոխությամբ: **Բեկ** (բեկանել) արմատի իմաստներից մեկն է *ավերված տեղ*, որից Հ. Աճառյանը առաջացած է համարում **պէկ**-ը (ավերված, քանդված տեղ), մինչդեռ Ալ. Մարգարյանը համարում է **բակ** (կովկասյան լեզուներից փոխառյալ) բառի բարբառային ձևերից մեկը:

Տարակարծիք մեկնաբանություն ունի **առիս** բառը: Հ. Աճառյանը կարծում է, որ այն առաջացել է **առ** և **իս** (*ես* դերանվան հայցական հոլովածը) բաղադրիչներից, Ստ. Մալխասյանը՝ **առ** և **ի** նախդիրների միասնությունից, իսկ Ալ. Մարգարյանը՝ բառը համարում է **առ** նախդրի հոլովված ձևը **ս** ստացական հոդով:

Ալ. Մարգարյանը բառաքննական ուսումնասիրություններում անդրադարձել է նաև մի շարք տեղանունների ստուգաբանությանը. **Խնածախ**-ը համարում է **խան** և **ծախ** բաղադրիչներից բարդված, **Քարահունջ**-ը՝ **քար** և **ունջ** (ստորոտ և հատակ):

Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությանը նվիրված նյութերից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Ա.Պողոսյանի «Ն/ի մասնիկը և նրա բառակազմական նշանակությունն ու իմաստային առումները հայերենի բարբառներում» ծավալուն հոդվածը: Անդրադառնալով *նի* մասնիկի ուսումնասիրության պատմությանը՝ հոդվածագիրն այն համարում է ոչ բավարար: Առանձնապես կարևորություն տալով այն հարցին, թե ինչ ծագում ունի կամ ինչպես է ձևավորվել *նի* մասնիկը՝ հեղինակը հիմնավորում է իր այն տեսակետը, որ բառակազմությանը մասնակցող *նի* մասնիկը կազմությամբ ու բնույթով տարբեր է գոյականի ու դերանունների հետ որպես հետադրություն գործածվող *նի*-ից: Բայակազմական նի մասնիկի սկզբնավորումը գալիս է դարերի խորքից, չնայած նախապես այն եղել է մի քանի բառերի մեջ: Հետագայում ոչ կենսունակ այդ տարրը ընդհանրացման շնորհիվ տարածվել ու դարձել է կենսունակ երևույթ որոշ խմբի բարբառներում, այդ թվում և Ղարաբաղի բարբառում:

Որպես բայակազմական նի մասնիկի բնորոշ առանձնահատկություններ՝ Ա. Պողոսյանը նշում է հետևյալը.

1. Հարադրվող բայի բազում ու տարաբնույթ նշանակությունը կամ առումները խիստ սահմանափակում, նեղացնում է կամ էլ բառին հաղորդում է նոր իմաստներ:
2. Առանձին դեպքերում ունակ է սեռային փոփոխություն առաջացնելու՝ ներգործական բայերը դարձնելով չեզոք կամ միևնույն բառույթի սահմաններում դրսևորելու կրկնասեռություն:
3. Բայական մի շարք ձևերում նի-ն հարադրվող բայի հետ իմաստային ձույլ միասնություն է կազմում (նի մըտնել, նի հետ անել, նի հետ տալ):

Ինչ վերաբերում է իբրև հետադրություն գործածվող նի մասնիկին, ապա, ըստ հեղինակի, այն համեմատաբար ուշ շրջանի երևույթ է և առաջացել է **իյեր** (**ի վեր**) բաղադրյալ կապի **յեր** (<վեր) բաղադրիչի սղումից և **ի** նախդրի ու նրան նախորդող **ն** հոդի միացումից:

Իբրև հետադրություն գործածվող նի մասնիկի համար Ա. Պողոսյանը նշում է հետևյալ գործառնությունները.

1. Ղարաբաղի և Հաղարթի բարբառներում դրվելով որոշյալ հայցականով կապվող բառի հետ՝ դրսևորում է տրական և գործիական հոլովների իմաստներ (կէտընի քինի, իրէսընի խոսէլ):

2. Ժամանակի իմաստ արտահայտող բառերի որոշյալ հայցականի հետ ցույց է տալիս մի ժամանակամիջոց, որի ընթացքում կատարվում է գործողությունը (շէբաթընի, ամէսընի):

3. Ղարաբաղի և Հաղարթի բարբառներում, հարադրվելով գոյականի և դերանունների սեռական տրական հոլովաձևերին, որպես **հետ** կապի բաղադրիչ ցույց է տալիս հանգում, վերաբերություն և փոխադարձ գործողությամբ կապվող առարկաների սերտ միասնության հարաբերություն (ինձ նի հէտ, կ'ուլու նի հէտ):

«Ղարաբաղի միջէնթաբարբառը» հոդվածում Հ.Բաղրամյանը քննվող ենթաբարբառը ներկայացնում է որպես մերձարաքսյան ու Արցախական կամ ս-ական և ու-ական եռաստիճան անտեղաշարժ և երկաստիճան ձայնեղագուրկ բաղաձայնական համակարգ ունեցող բարբառախմբերի նկատմամբ միջին դիրք ունեցող բարբառախումբ, որի համար հեղինակը ներկայացնում է հետևյալ ինքնատիպ հատկանիշները՝ հնչյունական-հնչյունախոսական, հնչյունափոխական և ձևակազմական-ձևաբանական:

Պատմաբանասիրական հանդեսի էջերում տպագրված և Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքներից են նաև երկու գրախոսություններ, որոնցից մեկը նվիրված է Ա. Պողոսյանի «Հաղարթի բարբառը» գրքին (հեղինակ՝ Ս. Աբրահամյան), մյուսը՝ Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» գրքին (հեղինակ՝ Ա. Ղարիբյան):

Ա. Պողոսյանի «Հաղարթի բարբառը» գրքին նվիրված գրախոսականում Ս. Աբրահամյանը մենագրությունը ներկայացնում է ըստ առանձին բաժինների՝ հնչյունաբանություն, ձևաբանություն, բառագիտություն և շարահյուսություն: Գրքի առավելություններից գրախոսը նշում է Հաղարթի շրջանի բոլոր գյուղերից հավաքված բարբառային նմուշների առկայությունը՝ յուրաքանչյուրին կից տրված անհասկանալի բառերի համառոտ բացարանով, ինչպես նաև բարբառի կառուցվածքի տեսակետից էական մի քանի երևույթները ըստ տարբեր գյուղերում ունեցած դրսևորումների ներկայացնող քարտեզները:

Գրախոսը վիճելի է համարում Ա. Պողոսյանի կողմից ներկայացված մի շարք քմային բաղաձայնների առկայությունը Հաղարթի բարբառում՝ դրանք համարելով դիրքային հանգամանքով պայմանավորված քմային արտասանություններ: Ս. Աբրահամյանը չի ընդունում նաև բարբառային մի շարք բառերի դիմաց իբրև գրաբարյան համարժեք ներկայացվող մի շարք բառերի գոյությունը՝ նշելով, որ ենթադրությամբ վերականգնվող բառերը պետք է բերել համապատասխան նշումով, սովորաբար աստղանիշով:

Որպես Կ. Դավթյանի մենագրության առավելություններ Ա. Ղարիբյանը նշում է Լեռնային Ղարաբաղի մարզի բարբառային նյութերի բարեխիղճ և մանրամասն փաստագրությունը, հեղինակի կողմից երևան բերված ու գրի առնված բարբառային այն բոլոր տարբերակները, որոնք գոյություն ունեն առանձին շրջանների և առանձին գյուղերի խոսվածքների մեջ: Աշխատության նորություններից մեկն էլ Ղարիբյանը համարում է Ղարաբաղում գոյություն ունեցող Մեհտիշենի բարբառի առանձնացումը, բարբառ, որը հիշեցնում է պարսկահայ բարբառները, սակայն իր մեջ ներառել է Ղարաբաղի բարբառի որոշ հատկություններ: Որպես թերություն գրախոսը նշում է բարբառային փաստերի լիակատար քարտեզագրման բացակայությունը, որը գիրքը դարձնում է միայն բարբառագիտության մեջ խորացած մասնագետների սեփականությունը: Ղարիբյանը չի համաձայնում Դավթյանի՝ «ում» ճյուղը «մ» ճյուղ վերանվանելու տեսակետին:

Այսպիսով՝ Պատմաբանասիրական հանդեսի էջերում տպագրված ու Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությանը նվիրված աշխատանքները նպաստում են հայերենի ամենակեսունակ ու տարածված բարբառի ամբողջական նկարագրի ձևավորմանը: